

— Շատ բարի, եղբայր, ապրի՛ս, աստուած բանդ յաջողէ.— ըսաւ Յովնան եւ հրամայեց երկու ճարպիկ երիտասարդներու երթալ տեսնել ճամփան իւր բոլոր երկայնութեան մէջ եւ երբ կարելի է զգուշութեամբ դուրս ելնել եւ բարբարոսաց դիրքն իմանալ:

Եւ ինքն այն միջոցին կը դիտէր թէ ինչպէ՛ս թշնամին կը գեղանէր, կը տարածէր որպէսզի ամէն կողմէն բերդը պաշարէ, եւ իւր սուր աչքերը չէին բաժնուեր այդ Ս. Ստեփաննոսի եկեղեցիէն, որու դռան առջեւ քանի մը արաբացի զինուոր միայն կ'երեւային եւ որ վերջը թողին եկեղեցին եւ եկան խառնուելու ամբոխին հետ: Վերջապէս մեծ հաճութեամբ տեսաւ իր երկու խութեցիքը, որ աչալուրջ գողի պէս գլուխնին կը հանէին եկեղեցուոյն դռնէն դուրս զգուշութեամբ եւ ներս կը քաշուէին, վերջը՝ քանի մը վայրկեանէն կը տեսնէր, որ նոյն խութեցիներէն մէկը եկեղեցուոյն տանեաց վրայ դառացեալ կը շրջէր սողալով եւ ամէն կողմ կը դիտէր ու կ'աներեւութանար. «Ապրի՛ք տղաք, այսպէս պէտք է լինիլ միշտ», կ'ըսէր Յովնան ինքնիրեն եւ կը սպասէր նոցայ գալստեան, ու սաստիկ կը ցաւէր թէ ինչպէ՛ս այդպիսի փոքրիկ խմբով ելեր էր իւր չեռներէն: «Ա՛հ, եթէ հազար հոգի մը իմ գլուխս ունենայի փոխանակ այս հարիւր քաջերու, այդ երեսուն հազար աւագակաց խումբը կաքաւներու պէս կը ցրուէի հիմա: Տեսնե՜ք, ո՛յ գիտէ թերեւս Աշոտ Արծրունին բան մը յաջողի ընելու. փոքրիկ յաջողութիւն մը բաւական է ինձ եւ ես շաբաթ մը կ'ուղամ երկու հազար հոգուով իրեն օգնելու»:

Այսպէս կը խորհրդածէր, երբ տղաքը եկան եւ պատմեցին իրենց ստորերկրեայ արշաւանքը, եւ նա գիրենք վարձատրեց «Շա՛տ բարիք ապրի՛ք, որդեակք», ըսելով. այս բառերը Յովնանու ժլատ բերնէն մեր լեռնցիները այնչափ ուրախացուց ինչչափ որ Բիւզանդիոնի կայսերաց պալատականը կ'ուրախանային, երբ ինքնակալ տէրը բազմականգուն տիտղոսներ շնորհէր իրենց:

Ժամանակն սկսէր էր մթնել, երբ ինք առջեւէն մտաւ գետնուղին եւ ամենքը ետեւէն հասան եկեղեցին, զգուշութեամբ ելան դուրս եւ առանց տեսնուելու սկսաւ յետադարձը, ու բոլոր գիշեր քալելով